Agribusiness Teaching Center
In Corporation with Texas A&M and
the State Agrarian University of Armenia

2 àõÎ
2 ·ñáµÇ½Ý»ëÇ áõëáõóÙ ³Ý Ï»Ý ï ñáÝ
¶áñÍáõÙ ¿ î»Ë ³ëÇ A&M Ñ ³Ù ³Éë ³ñ ³ÝÇ ¨ Ð ³Û ³ë ï ³ÝÇ
å» ï ³ Ï ³Ý ³ ·ñ ³ñ ³ÛÇÝ Ñ ³Ù ³Éë ³ñ ³ÝÇ ·áñÍ ³ ÏóáõÃÛ ³Ùµ

# Newsletter

# î»Õ»Ï ³ ·Çñ

Issue 4 (9)
May 2006

ÂÇí 4 (9)
Ø ³ÛÇë 2006

## State Exams at ATC



***By Raphael BAKHTAVORYAN***
***Microeconomics Instructor***

On May 10 and 11, as well as May 22 and 23, 5th year students took the state exams at the Agribusiness Teaching Center. All in all 26 students participated. Since it was too long and tiring to have all 26 students take their state exams the same day, they were divided into two groups. The first group took the exam the first day and the second group on the following day.

The first state exam was more business oriented. It included such classes as Finance, Management and Marketing, or in other words the core classes at ATC. The second exam covered Accounting, Microeconomics, Macroeconomics, International Economics,



Natural Resource Economics, and Cooperatives.

The exam committee was formed in such a way that ATC lecturers of subjects in question were present at the exam. In addition to lecturers, the Director of ATC, Dr. Daniel Dunn, and the Head of the committee, Dr. Armen Asatryan, were present at both exams. Also present was Gayane Gasparyan, who serves as a liaison between ATC and the Armenian State Agrarian University.

Overall, the committee was satisfied with the level of knowledge the students demonstrated. Some of them were very uptight prior to the exams, but they were able to pull themselves together and do a good job answering the questions posed by the committee members. And, in their turn the students were very pleased with the friendly atmosphere that the committee members tried to maintain throughout the exams.

Finally, the exams are over and the students are looking forward to the graduation ceremony that will take place at the beginning of June. Even though they are going to have different jobs, they are all going to be thankful to the same institution, the Agribusiness Teaching Center! ❍

## ԱՈւԿ-ում ավարտվեցին պետական քննությունները

***Ռաֆայել Բախտավորյան***
***Միկրոտնտեսագիտության դասախոս***

Մայիսի 10-11-ին, ինչպես նաև 22-23-ին 26 հինգերորդկուրսեցիներ հանձնեցին պետական քննություններ: Քննություններն ավելի արդյունավետ անցկացնելու նպատակով ուսանողներին բաժանել էինք երկու մասի:

Առաջին պետական քննությունը առավել գործարար ուղղվածություն ուներ և ներառում էր ֆինանսներ, կառավարում և մարկետինգ առարկաները, այլ խոսքով՝ ԱՈւԿ-ի առանցքային դասընթացները: Երկրորդ քննությունը ներառում էր հաշվապահությունը, միկրոտնտեսագիտությունը, մակրոտնտեսագիտությունը, միջազգային տնտեսագիտությունը, բնական պաշարների տնտեսագիտությունը և կոոպերատիվները:

Քննական հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին քննական առարկայի դասախոսները, ԱՅԿՄԿ տնօրեն դոկտ. Դենիել Դանը, հանձնաժողովի նախագահ դոկտ. Արմեն Ասատրյանը, ՀՊԱՀ մագիստրատուրայի վարիչ և ԱՈւԿ-ի հետ կապերի պատասխանատու Գայանե Գասպարյանը:

Ընդհանուր առմամբ, հանձնաժողովը գոհ էր ուսանողների ցուցաբերած գիտելիքներից: Նրանցից ոմանք շատ հուզված էին քննությունից առաջ, սակայն բուն քննության ընթացքում հավաքվեցին և հանձնաժողովի անդամների առաջադրած հարցերին հստակ պատասխաններ տվեցին: Ավելին, ուսանողները գոհ մնացին հանձնաժողովականների ստեղծած բարեկամական մթնոլորտից, որը պահպանվեց քննությունների ամբողջ ընթացքում:

Քննությունները վերջապես ետևում են և ուսանողները սպասում են ավարտական միջոցառմանը, որը տեղի կունենա հունիսի սկզբին:

Թեև շրջանավարտներից յուրաքանչյուրը գնալու է մասնագիտական գործունեության իր սեփական ուղիով, բայց նրանց բոլորի երախտագիտության հասցեատերը նույնն է՝ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը:



# John Nichols Meets with ATC Students

On May 25, during his short term visit to ATC, John Nichols, Texas A&M professor of food and agribusiness marketing and leader of the agribusiness program in Armenia, visited with the junior, 4th year and senior ATC students. In general, Dr. Nichols' regular visits to Armenia are important to help ICARE management and ATC faculty and students in furthering the development of this modern education experience in the region. The meeting with the seniors (in fact, graduates), in particular, was remarkable in terms of mutual interest and maturity of the students in presenting their future life outside the ATC family.

Some of the other issues discussed were the advantages of learning in ATC: free exchange of ideas, interactivity, modern textbooks and modern teaching approaches. To Dr. Nichols' question about what can be important in ATC's future development, the students mentioned introduction of a Master's program, new computers, an ATC gym, and others.



He was pleased to mention that the percentage of Armenian faculty now prevails, which is an important step toward sustainability of ATC.

Dr. Nichols also presented some details on how to apply for entrance to Texas A&M University.

He challenged the students to be actively involved in the Alumni Association. "In the U.S., there is a tremendous loyalty towards these important institutions," Dr. Nichols said, "And I hope you are going to be the movers of ATC in the future, generating money for internships and other educational purposes." He encouraged the students to work hard and try to build up that loyalty. "Stay engaged," said Dr. Nichols closing the meeting.

# Ջոն Նիքլզը հանդիպում է ուսանողների հետ



Մայիսի 25-ին՝ ԱՈւԿ իր հերթական կարճաժամկետ գործուղման ընթացքում, Տեխասի համալսարանի սննդի և ագրոբիզնեսի մարկետինգի պրոֆեսոր, Հայաստանում ագրոբիզնեսի կրթության ծրագրի ղեկավար Ջոն Նիքլզը հանդիպումներ ունեցավ ԱՈւԿ-ի երրորդ, չորրորդ և հինգերորդ կուրսերի ուսանողների հետ: Ավարտական կուրսի ուսանողների հետ հանդիպման ժամանակ, մասնավորապես, ուսանողները ներկայացրին ապագա գործունեության մասին իրենց ծրագրերը:

Քննարկվեց ԱՈւԿ-ում սովորելու առավելությունների՝ մտքերի ազատ փոխանակության, ինտերակտիվ դասագործընթացի, ժամանակակից դասագրքերի և ուսուցման ժամանակակից մեթոդների կարևորությունը: Ի պատասխան դոկտ. Նիքլզի հարցին, թե ինչպես են իրենք պատկերացնում ԱՈւԿ-ի ապագա զարգացումը, ուսանողները որպես առանցքային խնդիրներ նշեցին մագիստրատուրայի ծրագրի ներմուծման և նոր համակարգիչներով լաբորատորիան հագեցնելու անհրաժեշտությունը:

Դոկտ. Նիքլզի Հայաստան պարբերական գործուղումները, ԱՀԿՄԿ հիմնադրամի և ՀՊԱՀ ղեկավարության, ԱՈւԿ-ի դասախոսների և ուսանողների հետ հանդիպումները կարևոր են տարածաշրջանում ժամանակակից ագրոբիզնեսի կրթության շարունակական զարգացման տեսակետից: Ի դեպ, նա ուրախությամբ նշեց, որ հայ դասախոսների գերակայող թիվը, մասնավորապես, խոսում է ԱՈւԿ-ի կայուն զարգացման ուղղությամբ արված լուրջ քայլի մասին:

Դոկտ. Նիքլզը հետաքրքրվող ուսանողներին ներկայացրեց Տեխասի A&M համալսարան ընդունվելու ընթացակարգերի վերաբերյալ մի շարք մանրամասներ: Նա կոչ արեց ակտիվացնել շրջանավարտների միության աշխատանքները: «ԱՄՆ-ում մեծ վստահություն կա այդ կարևոր հաստատությունների նկատմամբ,-ասաց նա,-ես հուսով եմ՝ ապագայում դուք եք լինելու ԱՈւԿ-ի շարժիչ ուժը՝ հանգանակություններ կազմակերպելով ԱՈւԿ-ի արտադրական պրակտիկաների, ուսումնական այլ գործընթացների ֆինանսավորման համար»: Դոկտ. Նիքլզը ուսանողներին խրախուսեց փորձել ձևավորել այդ վստահությունը:

# ATC Welcoming Newcomers

Twenty-seven Armenian and six Georgian students were selected after the two-phase entrance exams to fill the junior class of 2006-2007. Most of the Armenian students are from the Agribusiness and Marketing Department of the Armenian State Agrarian University, who have completed their second year at the university, while there are also students from other ASAU departments and other Armenian universities. The six Georgian students are from Georgian State Agricultural University Tbilisi and GSAU/Batumi Agricultural Institute.

About fifty applicants in Yerevan and forty applicants in Tbilisi competed in written tests for proficiency in English and basic Economics and Mathematics. The level of tests is within the requirements of the ASAU second-year curriculum. The second phase

# ԱՈւԿ-ը ողջունում է նորեկներին

Մայիս ամսին տեղի ունեցան 2006-2007 ուստարվա ԱՈւԿ-ի ընդունելության քննությունները: Կրտսեր (երրորդ) կուրսի համար ընտրվեցին քսանյոթ հայ և վեց վրացի ուսանողներ: Հայ ուսանողների մեծամասնությունը ՀՊԱՀ տնտեսագիտության ֆակուլտետի ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտության գծով երկրորդ կուրսն ավարտածներն են, մյուսները՝ համալսարանի այլ մասնագիտություններից կամ այլ բուհերից եկածները: Վրացի ուսանողները ներկայացնում են Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանն ու ՎՊԳՀ Բաթումիի գյուղատնտեսական ինստիտուտը: Ընտրությունը կատարվել է Երևանում՝ մոտ 50, իսկ Թբիլիսիում՝ 40 դիմորդների միջև: Վրաստանում ակնհայտորեն շատ ավելի լարված մրցակցություն է եղել ԱՈւԿ-ում սովորելու համար:

included oral interviews.

In early June a preparatory program in Business English, Introduction to Economics, and Computer Applications will begin for the 33 lucky students.

The interviews revealed that the prevailing incentive for applicants coming to ATC is its good reputation in Armenia and Georgia for being a modern institution with professional education and language skills. The students felt that with this education, they could find jobs in the agribusiness or other sectors.

Երկու փուլով ընդունելության քննությունների առաջին փուլում դիմորդները հանձնեցին գրավոր տեստ անգլերենից և անգլերենով՝ ընդհանուր տնտեսագիտությունից և մաթեմատիկայից: Տեստերի բարդությունը համապատասխանում է ՀՊԱՀ տնտեսագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսումնական պլանի պահանջներին: Երկրորդ փուլը հարցազրույցի փուլն էր:

Հունիսի սկզբին 33 հաջողակ ուսանողների համար ԱՈւԿ-ում կմեկնարկեն ամառային նախապատրաստական դասընթացները գործարար անգլերեն, տնտեսագիտության ներածություն և համակարգչի կիրառում առարկաների գծով:

Հարցազրույցները ցույց տվեցին, որ ԱՈւԿ-ում սովորելու համար դիմող ուսանողների հիմնական շարժառիթը Հայաստանում և Վրաստանում ԱՈւԿ-ի բարի համբավն է՝ որպես մասնագիտական և լեզվական պատշաճ գիտելիքներ ու հմտություններ ապահովող ժամանակակից կրթական հաստատության, որն ավարտելուց հետո իրական հնարավորություններ են բացվում ագրոբիզնեսի և այլ ոլորտներում համապատասխան աշխատանք գտնելու համար:






# Green Lane NGO Thanks ATC Students for Help

*By Andrey APRESOV*
**ATC 4**



Encouraged by unprecedented consumer demand for healthy, environmentally friendly foods, organic agriculture has carved its way into the conventional foods market. The situation is also changing in Armenia. The lack of money for chemicals and fertilizers on many farms has resulted in hundreds of hectares of land being farmed using organic techniques. Over the past 4-5 years, several organizations have been promoting organic agriculture. “Green Lane”, Agricultural Assistance NGO, has a unique role in this field of agriculture. A group of ATC 4$^{th}$ year students, Lusine Atabekyan, Haykanush Mikaelyan, Olga Kudoyan, Sona Babayants, Lilit Meloyan, and this reporter were happy to help Green Lane to organize an international roundtable entitled *Current Situation and Priority Tasks in Organic Agriculture in Armenia.* Sylvia Ehrhardt, the Ecological Agriculture Advisor from EcoAG International and Dora Rumsey, former USDA MAP TDY Extension Specialist, WSU, were among the guests of the event. In addition to translation and organizational efforts during the roundtable, we assisted Ms. Ehrhardt and Dr. Rumsey throughout their stay in Armenia. We provided handy assistance in oral and written translations, compiling materials for the roundtable, visiting different organizations and farmer groups. I accompanied Ms. Ehrhardt on almost all of her trips, since I had some experience with Green Lane and organic farming during my internship last year .

We had a very successful ten days of practice and received important information while assisting U.S. experts at Green Lane.

We are pleased that Dr. Dunn, Director of ICARE, received a thank you letter from the Chairperson of Green Lane, Nune Sarukhanyan. “I express my deepest gratitude to the management of ATC for the support by your wonderful students” Ms. Sarukhanyan stated in particular in her letter.

# Կանաչ արահետ ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում ԱՈւԿ-ին օգնության համար

*Անդրեյ Ապրեսով*
**ԱՈւԿ 4**

Առողջ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի աննախընթաց պահանջարկից ելնելով՝ օրգանական գյուղատնտեսությունը հարթում է իր ուղին դեպի գյուղմթերքի ընդհանուր շուկա: Այս առումով իրադրությունը փոխվում է նաև Հայաստանում: Բազմաթիվ գյուղացիական տնտեսություններում թունաքիմիկատների և պարարտանյութերի համար ծախսվելիք դրամի պակասը բնականոն կերպով հանգեցրել է այն բանին, որ հարյուրավոր հեկտարներ մշակվում են օրգանական տեխնոլոգիաների կիրառմամբ: Վերջին 4-5 տարիների ընթացքում Հայաստանում ի հայտ եկան մի քանի կազմակերպություններ, որոնք փորձում են նպաստել երկրում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ն դրանցից մեկն է:

Մի խումբ 4-րդ կուրսեցիներ՝ Լուսինե Աթաբեկյանը, Հայկանուշ Միքայելյանը, Օլգա Կուդոյանը, Սոնա Բաբայանցը, Լիլիթ Մելոյանը և տողերիս հեղինակը վերջերս ուրախությամբ օգնեցինք «Կանաչ արահետին»՝ կազմակերպելու «Օրգանական գյուղատնտեսության ներկա վիճակը և առաջնահերթ խնդիրները Հայաստանում» թեմայով կլոր սեղանը: Միջոցառման հյուրերի թվում էին ԷկոԱԳ միջազգային կազմակերպության՝ էկոլոգիական գյուղատնտեսության գծով խորհրդական Սիլվիա Էրհարդտը և ԱՄՆ ԳԴ ՄԱԾ-ի նախկին փոչձագետ Դորա Ռամզին: Հայաստան այցի ընթացքում մենք տիկ. Էրհարդտին և դոկտ. Ռամզիին թարգմանչական և կազմակերպչական բնույթի օժանդակություն ցուցաբերեցինք՝ կլոր սեղանի և ֆերմերային խմբերի ու տարբեր



կազմակերպությունների հետ նրանց հանդիպումների ժամանակ: Մասնավորապես ես ուղեկցեցի տիկ. Էրիարդտին գրեթե բոլոր այցելությունների ժամանակ, քանի որ Կանաչ արահետում արտադրական պրակտիկայի որոշակի փորձ ունեի, ինչպես նաև՝ օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ հիմնական գիտելիքներ:

Տիկին Էրիարդտի հետ անցկացրած տասն օրը մեզ համար փորձ և տեղեկատվություն ձեռք բերելու տեսակետից կարևոր ժամանակաշրջան եղան:

Գոհունակությամբ նշեմ, որ ԱՅԿՄԿ հիմնադրամի տնօրեն դոկտ. Դանը շնորհակալական նամակ ստացավ Կանաչ արահետի նախագահ Նունե Սարուխանյանից, որտեղ տիկ. Սարուխանյանը մասնավորապես նշում է. «Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում Ձեր հրաշալի ուսանողների



# Seminar on FOREX Market

***By Arthur GRIGORYAN***
***Teacher Assistant***

Garnik Sevoyan and Arthur Grigoryan (ATC graduates of 2005) were the lecturers at a regular Friday seminar. The subject of their seminar presentation was the FOREX market and how it could be used in Armenia.

FOREX is a global foreign exchange market, where a person can buy and sell many currencies at real prices in real time. Mr. Grigoryan and Mr. Sevoyan explained the limitations of investments in property and real estate, gold, stocks and bank deposits



and the advantages the foreign exchange market has. FOREX is absolutely competitive because its daily turnover is about 1.9 trillion dollars and nobody (including central banks, major international banks, private financial institutions, brokers or individuals) can monopolize this market and affect the exchange rates.

The concept of margin trading was explained in the context of opening an account in FOREX. Mr. Grigoryan and Mr. Sevoyan gave the example of three triangles, in which higher risk is associated with smaller capital investment and higher return and vice

# ՖՈՐԵՔՍ շուկան՝ ուրբաթօրյա սեմինարի թեմա

***Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ***
***Դասախոսի օգնական***

Գառնիկ Սևոյանը և տողերիս հեղինակը՝ ԱՈւԿ-ի 2005 թ. շրջանավարտներս, ուրբաթօրյա հերթական սեմինարի դասախոսներն էինք: Սեմինարի թեման FOREX շուկան էր և դրա օգտագործման հնրավորությունը Հայաստանում:

FOREX-ը արտարժույթի գլոբալ շուկա է, որտեղ անձը կարող է գնել և վաճառել բազմաթիվ արժույթներ իրական գնով և իրական ժամանակ: Բացատրվեցին սեփականության, անշարժ գույքի, ոսկու, արժեթղթերի և բանկային ավանդների ոլորտում ներդրումներ կատարելու սահմանափակումները, ինչպես նաև՝ արտարժույթի շուկայի ունեցած առավելությունները: FOREX-ը բացարձակապես մրցունակ է, քանի որ դրա օրական շրջանառությունը կազմում է մոտ 1,9 տրիլիոն դոլար, և, ըստ էության, ոչ մեկը (այդ թվում՝ կենտրոնական բան-կերը, խոշոր միջազգային բանկերը, մասնավոր ֆինան-սական հաստատությունները, միջնորդները կամ անհատները) չի կարող մենաշնորհային դարձնել այս շուկան և ազդել փոխարժեքների վրա:




Ուսանողներին բացատրվեց մարժային առևտրի էությունը, որի դեպքում անձը կարող է ֆինանսական որևէ հաստատության միջոցով ավելի փոքր գումար ներդնել և հաշիվ բացել FOREX-ում: Բերվեց երեք եռանկյունիների օրինակը, որտեղ ավելի բարձր ռիսկը կապված է ավելի փոքր կապիտալ ներդրումների և ավելի բարձր հատույցի հետ և ընդհակառակը:

Դասախոսության ընթացքում FOREX շուկայում առևտրի իրական օրինակի վրա բացատրվեցին շատ առանձնա-հատկություններ և կանխատեսման մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ հիմնարար և տեխնիկական վերլուծությունը, ինչպես

versa.

During the lecture a real example of trading in the FOREX market was shown and many peculiarities and forecasting techniques were explained, such as fundamental and technical analysis, how to “read” and understand charts, how a certain trend in price can tell about the future price.

The conclusion was that the involvement of Armenian investors in this market can become a good investment for them, but at the same time it is very risky, and according to statistics, about 90% of traders are losers, because of lack of understanding of charts, misunderstandings in actual trends in the world economy and other factors.

As usual, there were many questions from the interested and smart ATC students.

«կարդալ» և հասկանալ սանդղակները, ինչպես գնի որոշակի միտվածությունը կարող է ցույց տալ ապագա գինը և այլն:

Եզրակացությունն այն էր, որ այս շուկայում հայաստանյան ներդրողների ներգրավվածությունը կարող է նրանց լավ արդյունքների հանգեցնել, բայց միևնույն ժամանակ այն շատ ռիսկային է և, ըստ վիճակագրության, առևտրականների մոտ 90 տոկոսը տանուլ են տալիս սանդղակներն ու համաշխարհային տնտեսության զարգացման իրական միտումները չհասկանալու և մի շարք այլ գործոնների պատճառով:

Ինչպես միշտ, ԱՈւԿ-ի հետաքրքրասեր ու խելոք ուսանողները ժլատ չէին հարցեր տալու գործում:

# ATC Gathering in Aghveran



***By Olga KUDOYAN***
***ATC 4***

On May 21, ATC organized a picnic in Aghveran, a resort not far from Yerevan. Senior, 4th year, and junior students as well as alumni joined the traditional ATC annual picnic. With the crowd becoming larger and larger I had the feeling that everyone who once enters ATC remains its member forever.

It is hard to say what made us cheerfully sing songs and play different funny games on our way to Aghveran; the current year-end and state exams or the forthcoming summer internships. But when we arrived at the gorgeous place by the riverside surrounded by mountains and green forests, we instantly forgot about everything else. We enjoyed the beauty of Mother Nature and the company of birds and flowers. Some students missed the games, flower gathering, and mountain climbing while sleeping in the shade. Well, it was one of the very rare opportunities for the busy ATC students to sleep in nature. The only time we suspended all our idyllic picnic activities was at lunch time. You should have seen those dozens of hungry eyes and growling stomachs!

The day became one of the many bright days in our ATC life. Social events, especially those joining students and alumni, are an important advantage of ATC. As I said at the beginning of this article, in a sense, you never leave ATC even after graduating. This is the opinion of alumni. I will have the opportunity to check the truth of their words after one more year at ATC. In the meantime, I will enjoy my classes, instructors and social events during my last year at ATC.




# ԱՈւԿ-ի հավաք Աղվերանում

***Օլգա ԿՈւԴՈՅԱՆ***
***ԱՈւԿ 4***

Մայիսի 21-ին Աղվերանում կազմակերպեց ԱՈւԿ-ի ավանդական զբոսախնջույքը բոլոր կուրսերի ուսանողների և շրջանավարտների համար: Առավոտյան, երբ հավաքվածների թիվը գնալով ավելանում էր, ես զգացի, որ մեկ անգամ ԱՈւԿ ընդունվողը մշտապես մնում է նրա անդամը:



Դժվար է ասել՝ ինչն էր մեզ ստիպում այդքան ուրախ երգեր երգել ու զվարճալի խաղեր խաղալ՝ ընթացիկ քննությունները՞, թե՞ առաջիկա ամառային պրակտիկան: Բայց երբ հասանք բնության այդ գողտրիկ անկյունը, միանգամից մոռացանք ամեն ինչի մասին: Մենք վայելում էինք մայր բնությունը, թռչունների ու ծաղիկների ընկերակցությունը: Ոմանք բաց թողեցին մեր ժամանցի մի մասը՝ բաց չթողնելով բնության գրկում մուշ-մուշ քնելու հնարավորությունը: Մեր այս հովվերգական իրավիճակն ընդհատվեց միայն մեկ անգամ՝ ճաշի ժամին. քաղցած աչքերում կարծես լսվում էր քաղցած ստամոքսների ղլղլոցը:

Դա ԱՈւԿ-ում անցկացրած մեր հրաշալի օրերից մեկն էր: Ընկերային հավաքույթները, հատկապես երբ միանում են ուսանողներն ու շրջանավարտները, ԱՈւԿ-ի կարևոր առավելություններից մեկն են: Ինչպես արդեն նշել եմ հոդվածի սկզբում, որոշ իմաստով մենք երբեք չենք հեռանում ԱՈւԿ-ից, նույնիսկ՝ ավա րտելուց հետո: Սա հենց շրջանավարտների կարծիքն է: Անձամբ ես այս խոսքերի ճշմարտացիությունը ստուգելու հնարավորություն կունենամ մեկ տարի հետո, երբ ինքս ավարտեմ համալսարանը: Մինչ այդ, ես կշարունակեմ վայելել իմ դասերը, իմ դասախոսների հետ հաղորդակցությունը, ընկերային միջոցառումները:

Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Educaton Foundation
74 Teryan St., Yerevan, Armenia
In corporation with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia

Tel: (37410) 52-28-39, 56-95-70; Fax: (37410) 56-62-21
E-mail: sos_avetisyan@yahoo.com
² ·ñáµÇ½Ý»ëÇ áõëáõóÙ³Ý Ï»Ý ï ñáÝ . ºñ¨³Ý, î»ñÛ³Ý 74